ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 58

07 նոյեմբերի 2016 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 53-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների վարձակալական վճարի չափ սահմանել յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար ամսեկան 400 դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների 2016 թվականի համար վարձակալական վճարի չափ սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 56-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 53-Ն որոշումը:
3. Ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ք. Մարալիկ
07 նոյեմբերի 2016 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 07–Ի ԹԻՎ 59 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի <<Անի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը սահմանել ամսեկան 6000 դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի երաժշտական դպրոցի աշակերտների ուսման վարձը՝ ամսեկան 3000 դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի արվեստի դպրոց.

Հ/Հ	Անվանումը	Վարձավճարի չափ (դրամ)
1	Կերպարվեստի	1000
2	Ասեղնագործության և ֆուրշետի	1000
3	Պարարվեստ	1000
4	Ազգագրական երգ	500
5	Դեկորատիվ կարատեսակ	1000
6	Դիզայն գորգագործություն	1000
7	Ասմունք	500

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի մշակութային երիտասարդական կենտրոն.

Հ/Հ	Անվանումը	Վարձավճարի չափ (դրամ)
1	Տիկնիկային թատրոն	500
2	Ազգային պարեր	500
3	Կերպարվեստ	500
4	Վոկալ ազգագրական երգչախումբ	500
5	Կարատե	500
6	Ասմունք	500

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ